ԱՆԻ ՎԱՉԻԿԻ ՂԱՋԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի Թումանյանագիտության խմբի կրտս. գիտաշխատող
arpinanyan21@gmail.com
ORCID ID: 0000-0002-8593-0957
DOI: 10.54503/978-5-8080-1557-9-298

ԲԱՐՈՒՑ ԵՎ ՉԱՐԻՑ ԱՆԴԻՆ. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ՆԻՑՇԵԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՂ

Բանալի բառեր՝ *Ա. Իսահակյան, Ֆ. Նիցշե, Գերմարդ, գաղափարախոսություն, բազմախորհուրդ ընկալում, ազգային վիպասք, աշխարհայացք:*

Ներածություն

Անժխտելի փաստ է, որ Ավ. Իսահակյանի ստեղծագործական միտքը բացառապես սերում է ժողովրդական ակունքից, ինչը բնականորեն նպաստել է, որ նա բացառիկ տաղանդի ուժով մերձենա, իսկ այնուհետև օրինաչափորեն միաձուլվի ժողովրդական մտածողությանը, սեփական հոգու կնիքը թողնի այդ մտածողության վրա՝ ժողովրդից վերցրածը գեղարվեստական անգնահատելի գանձի վերածելով և վերադարձնելով նրա իսկական տիրոջը: Երկրին պատուհասած դարակազմիկ դեպքերի և իրադարձությունների պատճառով նրա անհանգիստ տրոփող սիրտն ինքնաբերաբար գեղարվեստականացել էր. անվերջ միաձուլվում էին հոգին ու կյանքը և արձակ ու չափածո տողերի տեսքով սրտի երգ դառնում, ջերմացնում մարդկանց որպես հոգեկան հանգստության կենսատու ուժ:

Այդպիսի մթնոլորտում էր ձևավորվում Վարպետի փիլիսոփայական մտածելակերպը, իսկ իրերի և երևույթների հստակ ընկալումն ու հուզական վերարտադրումը ընթերցողին ուղեկցում են դեպի բազմախորհուրդ ընկալումներ և կարդացածի ու զգացածի լիարժեք իմաստավորում, որովհետև բանաստեղծն իր բացակա ներկայությամբ աննկատ հորդորում է տխրության և հուսահատության պահերին կյանքին սթափ

հայացքով նայել, երբեք ու երբեք չհուսալքվել, անթարթ հայացքը հառել երկնքի մովին, հիանալ այն զարդարող աստղերի առեղծվածային գեղեցկությամբ, միախառնել զարմանքն ու հիացմունքը՝ կյանքը վերստին իմաստավորելու նպատակով, ինչին անկասկած հետևելու էր կենսական լավատեսությունը:

Հոդվածում քննության ենք առել Ավ. Իսահակյանի բացառիկ վերաբերմունքը գերմանացի հանրահայտ փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեի անգնահատելի ժառանգության և փիլիսոփայական գաղափարների հանդեպ:

Հոդվածի նպատակն է համեմատական և վերլուծական մեթոդների միջոցով ներկայացնել Ավ. Իսահակյանի և Ֆ. Նիցշեի փիլիսոփայական և գաղափարական հայացքների ընդհանրություններն ու տարբերությունները: Մեր խնդիրն այդ տեսակետից նրանց փիլիսոփայական ինքնատիպ հայացքների ընդհանրությունները ներկայացնելը:

Իսահակյանը Նիցշեի գաղափարակից

Իսահակյանի երիտասարդ շրջանի ստեղծագործությունները վկայում են, որ հատկապես Լայպցիգի համալսարանում ուսանելու տարիներին այդ ազդեցությունն աննկատ նպաստել է բանաստեղծի աշխարհայացքի կազմավորմանն ու ձևավորմանը, ինչի մասին բազմաթիվ գրառումներ կան «Հիշատակարանում» և օրագրերում: Կարճ ժամանակում նա հասցնում է խորությամբ ուսումնասիրել ժամանակի մեծագույն փիլիսոփաներ Հեգելի, Շոպենհաուերի, Կանտի և Նիցշեի աշխատությունները, որոնց շնորհիվ Ա. Իսահակյանի հավաստմամբ «նրա առջև բացվում են մարդկային ստեղծագործ մտքի նորանոր հորիզոններ, իր հոգևոր հետաքրքրություններին հագուրդ տալու աննախադեպ հնարավորություններ»[1]: Վարպետն ի վերջո բացառիկ հնարավորություն է ստանում իրեն տանջող աշխարհաճանաչման տարատեսակ հարցերի պատասխանները գտնելու, սեփական ներաշխարհում կատարվող դարակազմիկ իրադարձությունները սառնասրտորեն վերլուծելու և ճիշտ եզրահանգման գալու: Էջմիածնի ճեմարանում ուսանելիս նա հասցրել էր ծանոթանալ Արթուր Շոպենհաուերի հիմնական աշ-

[1] **Իսահակյան Ա.,** Ավետիք Իսահակյան, գիտական կենսագրություն, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2008, էջ 240:

խատություններին, որոնք, իր իսկ վկայությամբ, իր վրա ուժեղ տպավորություն էին թողել և հավատացած էր, որ մի գեղեցիկ օր իր երազանքի նավը անպայման կհանգրվանի երջանկության նավահանգստում:

Ա. Ինճիկյանի հետ զրուցելիս Ավ. Իսահակյանը հետաքրքիր փակագծեր է բացում. «Բուդդան և Շոպենհաուերը ինձ ոգևորել են, նրանց ազդեցությունը ես կրել եմ: Գերմանիայում առաջին գիրքը, որ ձեռք բերի Շոպենհաուերի «Աշխարհը որպես կամք և պատկերացում» երկն էր»[2]: Իր իսկ խոստովանությամբ, մարդկությանն ամեն տեսակ ճնշումներից և տառապանքներից ազատելու ուղիներ որոնելու ընթացքում երիտասարդ տարիներին տարվել է տարբեր փիլիսոփաներով, գայթակղվել պեսիմիզմով, անարխիզմով, հափշտակվել Բուդդայով, Շոպենհաուերով, սակայն վերջնարդյունքում համոզվել է, որ վերջինիս աշակերտ Նիցշեի բողոքող և ընդվզող ոգինու խոհափիլիսոփայական հայացքներն ավելի հոգեհարազատ ու սրտամոտ են իրեն, որովհետև տիրող հասարակության կաշկանդումներից ձերբազատվելու ձգտում էր տեսնում նրանցում: Այս խոսքերը հաստատվում են նաև այն իրողությամբ, որ հայ ժողովրդին անասելի ծանր վիճակից դուրս բերելու ելքեր էր փնտրում ազգային-ազատագրական պայքարին զինվորագրված երիտասարդ բանաստեղծը, որն առանց երկմտելու միանգամից արձագանքում է Նիցշեի «Այսպես էր խոսում Զրադաշտը» գրքում կերտած Գերմարդ հերոսի իդեալին: Ողբերգական իրականությանը քաջագիտակ, հայրենիքից հեռու, բայց մշտապես նրա հետ գտնվող Վարպետը ավելի է համոզվում, որ ազատամարտի հաջողության գրավականը հեղափոխական գաղափարների շուրջ համախմբված ժողովուրդն է և նրա առաջնորդ Նիցշեի հերոս Գերմարդը, որի մարտական ոգին հաղթանակելու և կյանքը վերափոխելու գաղափարը կրում է իր մեջ՝ բարձրաձայնելով. «Ես ուզում եմ հենի (Գերմարդ) լինել, մարդկության երակը, մարմնացումը լավ իդեալների: Այդ ճամփան շատ դժվար է, պետք է լինել հենի՝ մտածող ու ստեղծող, պետք է լինել գիտնական փիլիսոփա բանաստեղծ: Վեհի թևերով կթռչեմ իդեալին և երկնքի շանթերով կփշրեմ բռնության շղթան»[3]: Խոսելով գերմանացի փիլիսոփայից կրած ազդեցության մասին՝ Պ. Մակինցյանը գրում է.

---

[2] **Ինճիկյան Ա.,** Ավետիք Իսահակյան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977, էջ 229:

[3] **Իսահակյան Ա.,** Ավետիք Իսահակյան, գիտական կենսագրություն, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2008 թ., էջ 270:

«Ավ. Իսահակյանը մի առանձնահատկություն ունի… նրա միտքը հակված է փիլիսոփայելու. նա շարունակ մտորում է աշխարհի արժեքի, կյանքի նպատակի մասին, նա համակված է տիեզերական խոհերով»[4], այնուհետև համոզված ավելացնում. «Ավ. Իսահակյանը չի կարող նիցշեական լինել, չի կարող Նիցշեի անհատականության և անիշխանության ըմբռնումը յուրացնել, որովհետև այդ դեպքում նա պիտի իր ինքնությունից հրաժարվեր»[5]:

Նիցշեի ընդվզող հեղափոխական ոգով համակված բանաստեղծը գիտակցաբար տարվում է նրա կերտած Գերմարդով, որն ի զորու էր ժողովրդին դեպի փրկության ափ առաջնորդել: «Հետզհետե մշակում եմ այն տիպը, որ իմ գրվածքում ինձ նկարագրեմ: Ես պիտի իմ մեջ մարմնավորեմ մի հոգի, որին պիտի տամ Գերմարդ անունը»[6],- գրում է Իսահակյանը, ինչից հասկանալի է դառնում, որ Գերմարդի նախատիպերը իր հետագա երկերի հերոսներն էին, որոնք ազգի նվիրյալներ էին, հայրենապաշտ զինվորներ: Նիցշեի գաղափարախոսությունն իրոք հարստացրել է նրա հոգևոր աշխարհը, նպաստել աշխարհայացքի ձևավորմանը, ինչի շնորհիվ նա կարողացել է ինքն իրեն լիովին ճանաչել, ինքնաբացահայտվել, իսկ այնուհետև թեև հրաժարվել է նիցշեականությունից, սակայն այն համարել է իր կյանքի լավագույն էջերից մեկը: Հերոս-անհատի կերպարը նա մարմնավորել է «Մասըսա Մանուկ» վիպասքում, «Հայդուկի երգեր» շարքում, «Արծվամանուկը», «Լեռների հսկան» և «Իգիթ Սարդարը» լեգենդներում, «Աբու Լալա Մահարի» պոեմում, «Սասմա Մեր» վիպերգում և «Ուստա Կարո» վեպում:

Իսահակյանի փիլիսոփայական ուսմունքը

Իսահակյանն իր ստեղծագործական առաջին քայլերը սկսեց այն ժամանակ, երբ գրական աշխարհը լցված էր Նիցշեով, գրեթե չկար հասարակական որևէ շարժում կամ մշակութային ուղղություն, որ տարված չլիներ նրանով, ում ստեղծագործությունները միտված էին աշխարհը վերափոխելուն: Գերմանիա ուսանելու մեկնած պատանին ևս չէր կարող զերծ մնալ ըմբոստ խռովարարի համբավ ձեռք բերած փիլի-

---

[4] **Մակինցյան Պ.,** Դիմագծեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1980, էջ 91:
[5] Նույն տեղում, էջ 94:
[6] **Իսահակյան Ա.,** Ավետիք Իսահակյան, գիտական կենսագրություն, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2008, էջ 256:

սոփայի ազդեցությունից, մանավանդ որ դեռևս Գևորգյան ճեմարանում ուսանելիս տարվել էր Նիցշեի փիլիսոփայությամբ, իրեն արդեն Գերմարդ էր համարում՝ կայծակե թուրը ձեռքին ազատություն տենչալով նախ և առաջ անլուր տառապանքների տակ կքած հարազատ ժողովրդի համար: Սա անժխտելի ճշմարտություն է, ինչը հաստատում է Վարպետի կենսագիր, գրականագետ Ա. Իսահակյանը. «...Նիցշեականությամբ տարվելը Իսահակյանի համար ինքնանպատակ չէր, սահմանափակվող սոսկ իմացական հետաքրքրությունների շրջանակով: Նիցշեով հափշտակվելը այն ներքին խոր պահանջն էր, որ իր մեջ զգում էր ըմբոստ, ռոմանտիկ հոգու տեր երիտասարդ ստեղծագործողը»[7]:

Նիցշեով տարվելը բնավ էլ ինքնանպատակ չէր, սակայն ողբն ու լացը նրա ըմբոստ ոգուն հոգեհարազատ չէին, հայրենիքի նվիրյալ բանաստեղծի մեջ խոսում էր ազգային արժանապատվությունը, հանուն ազգի ու հայրենիքի փրկության բռունցքվելու և ոտքի կանգնելու վճռականությունը: Հասուն տարիքում նա հետադարձ հայացք է գցում անցած ճանապարհին, հիմնովին վերաիմաստավորում քայլերը, վերջնարդյունքում գալիս ընդհանուր հայտարարի ու սեփական փիլիսոփայության հայեցակարգը յուրովի մշակում: Հենց այդ հայեցակարգի ծնունդ են նրա հերոսներ Մասըսա Մանուկը, Սասմա Միհրն ու Ուստա Կարոն: Ի դեմս «Մասըսա Մանուկի» Վարպետը ազգային վիպասք ստեղծեց, ուր ներառված նյութը ոչ միայն համազգային, այլև համամարդկային նշանակություն ունի, որովհետև նա այդ ստեղծագործությամբ բացահայտում է ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ մարդկության ճակատագիրը՝ ազգային պատմության բախտորոշ իրադարձությունները գեղարվեստական ստեղծագործության նյութ դարձնելով: Սասմա Միհրը ժողովրդից կտրված հերոս էր՝ չհասկացված ու չգիտակցված՝ ի տարբերություն Մասըսա Մանուկի: Մանուկը, Միհրն ու Ուստա Կարոն լույսի ցոլքերն էին ժամանակի խավարի թագավորությունում և ունեին գրեթե նույն գերխնդիրը՝ ավելի խորությամբ ճանաչել աշխարհում տիրող անարդարություններն ու անիրավությունները, բարու և չարի հակադրությունը, ավելի հիմնավոր դարձնել աշխարհահեղաշրջման և վերակառուցման պատգամախոս դառնալու գաղափարին հանգելու անհրաժեշտությունը: Այսպիսին էր ազատ աշխարհ կառուցելու նրանց

[7] **Իսահակյան Ա.,** Բարև, Վարպետ, Եր., «Ծիծեռնակ» հրատ., 2008, էջեր 378–378:

ցանկությունը: «Սասմա Մեր» վիպերգում Իսահակյանն իրականացրել է իր վաղեմի երազանքը: Այն, ինչ չկարողացան անել Մասըսա Մանուկն ու Ուստա Կարոն, իրականություն դարձրեց Մեր՝ հայ ժողովուրդը, որի մեջ բանաստեղծը խտացրել է ժողովրդի բնավորության գլխավոր գծերը: Ի դեպ, Ուստա Կարոն և Օրթե Հարութը լրացնում են միմյանց: Կարոն տեսլականի ներկայությունն է իրականության մեջ, ով կամովի հանձն է առնում խեղաթյուրված ներկայի մեջ վերստեղծել բնականն ու բարոյականը, որպեսզի չխաթարվի մարդկանց անբիծ կյանքի անաչառությունը: Նա իր ապրած կյանքին նայում է ազգայինին միտված հայացքով, իսկ դառն անցյալի մասին խոհերից ծնված ներկայի մասին նրա խոսքը ուղղված է ապագային: Ներկան ու ապագան միաձուլված են հանդես գալիս, ինչպես հեղինակի հոգևոր հայրենիքն ու իրական հայրենիքը: Ի դեմս Կարոյի, Վարպետը խտացրել է երազանքի, իրականության, ողբերգականի և զավեշտականի հակադրությունը, փորձել նրա միջոցով արտահայտել հայ ժողովրդի աշխարհընկալումը, հոգեբանություն, փիլիսոփայությունն ու կենսասիրությունը: Կարոն հեղափոխական գաղափարներով տարված երիտասարդ Իսահակյանն է, իսկ Օրթե Հարութը ավելի խորաթափանց, շրջահայաց և իմաստնացած, հասուն տարիքի Վարպետն է, որն իր մեջ խտացնում է հայ ժողովրդի ազատատենչ ոգին: Այս տեսակետից իրավացի է Ա. Խաչատրյանը. «Ավետիք Իսահակյանը, լինելով խորապես ազգային բանաստեղծ, միաժամանակ համամարդկային վսեմ իդեալների կրողն ու արտահայտիչն էր, բազմապիսի թելերով կապված համաշխարհային գրականության, արվեստի և փիլիսոփայության հետ»[8]:

Հասկանալի է, որ Նիցշեի ցասումնալից ոգին նոր ուժ էր տալիս հայրենիքի ցավով տառապող Իսահակյանին, որն իսկապես նրան հոգեհարազատ ու սրտամոտ էր և դրդեց Նիցշեի ուսմունքի ու նրա կերտած Գերմարդու կերպարի ազդեցության տակ մշակել և զարգացնել փիլիսոփայական պատկերացումների սեփական ուսմունքը, որը լիովին կրում է Իսահակյան բանաստեղծի և մտածողի կնիքը: Այն գալիս է վերահաստատելու, որ հասուն տարիքում Վարպետն արդեն ոչ թե Նիցշեի, այլ սեփական փիլիսոփայության կրողն էր: Տեղին է հիշել

[8] **Խաչատրյան Ա.,** Ավետիք Իսահակյանի հայրենասիրական պոեզիան, Եր., ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտ. կրթության միություն, 1987, էջ 19:

Իսահակյանի հետևալ խոստովանությունը, որը շատ հարցերի հստակ պատասխան ունի իր մեջ. «Ինձ ասում են նիցշեական: Ես երկար ժամանակ եղել եմ նիցշեականության ազդեցության տակ, դա ճիշտ է: Եղել եմ նաև տոլստոյական: Նրանց միջոցով ես հասել եմ ինքս ինձ: Ես շատ շնորհակալ եմ Տոլստոյից, Շոպենհաուերից, Բուդդայից: Նրանք ինձ շատ-շատ բան սովորեցրին... Բայց թեև փոքր, մնացել եմ ես»[9]: Հարկ է նկատել, որ երիտասարդ բանաստեղծը վատատեսությունը համարում էր ճշմարտություն, իսկ լավատեսությունը՝ կեղծավորություն և գերադասում է առաջինը, որովհետև, իր իսկ համոզմամբ, «պեսիմիստն աշխատում է կյանքի վատ կողմերը լավացնել»: Միանգամայն իրավացի է Ս. Աղաբաբյանը, ով յուրովի է գնահատում Իսահակյանի գրական ժառանգությունը և ասում. «Ավետիք Իսահակյանը գրական այն մեծությունն է, որի թողած դասերը հարուցում են ժամանակակիցներիս անմիջական և ամենօրյա հուզական վերաբերմունքը: Այնտեղ, ուր կա հայոց ճակատագրի վերապրում, միշտ անպակաս է Ավետիք Իսահակյանի հոգևոր Լույսը»[10]:

Նիցշեն իրապես եղել է երիտասարդ բանաստեղծի ուսուցիչը, սակայն տարիների կենսափորձը Վարպետին ստիպում է ստեղծել սեփական փիլիսոփայությունը և 1938 թվականին, երբ արդեն իրականություն էր դարձել իր բաղձալի երազանքը, և հայրենիք էր վերադարձել, Արամ Ինճիկյանի հետ ունեցած զրույցում խոսում է իր և Նիցշեի միջև եղած տարաձայնությունների մասին. «Բայց ավելի շատ ինձ գրավում էր Նիցշեի լակոնիկ, աֆորիստիկ, կուռ ոճը: Հետո տեսա, որ նրա փիլիսոփայությունը խորթ է իմ հոգուն: Նիցշեի ցանկացած աշխարհը հզորների աշխարհն է: Հերոսների պաշտամունք ես էլ ունեմ, բայց Նիցշեի Գերմարդու դաժանությամբ չեմ ընդունում: Նիցշեն իմ մեջ արմատներ չգցեց, նա դաժանության փիլիսոփա է: Չէ որ հայ ժողովուրդը դաժանության զոհն է»[11]:

---

[9] **Իսահակյան Ա.,** Ավետիք Իսահակյան, գիտական կենսագրություն, էջ 271:

[10] **Աղաբաբյան Ս.**, 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում, Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, էջ 54:

[11] **Ինճիկյան Ա.,** Ավետիք Իսահակյան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977, էջ 228–229:

Եզրակացություններ

Ավ. Իսահակյանն իր ստեղծագործական կյանքի սկզբում իրավամբ դարձավ Նիցշեի փիլիսոփայության կրողը, որովհետև նրա ընդվզող ոգին ու խոհափիլիսոփայական հայացքներն ավելի հոգեհարազատ էին հայ բանաստեղծին: Պատահական չէ, որ նա ժամանակի ընթացքում գնահատանքի խոսքեր հնչեցրեց գերմանացի փիլիսոփայի հասցեին, որովհետև պատանի հասակում տարվել ու ոգևորվել էր նրա ուսմունքով: Նիցշեի գաղափարախոսությունն իրոք հարստացրել է բանաստեղծի հոգևոր աշխարհը, նպաստել նրա աշխարհայացքի ձևավորմանը, ինչի շնորհիվ նա կարողացել է ինքն իրեն լիովին ճանաչել և ինքնաբացահայտվել: Գաղտնիք չէ, որ Նիցշեի ցասումնալից ոգին նոր ուժ էր տալիս հայրենիքի ցավով տառապող Իսահակյանին, ինչն էլ նրան դրդեց Նիցշեի ուսմունքի ու նրա կերտած Գերմարդի կերպարի ազդեցության տակ մշակել ու զարգացնել փիլիսոփայական պատկերացումների սեփական ուսմունքը, որը լիովին կրում է Իսահակյան բանաստեղծի և մտածողի կնիքը:

АНИ КАЗАРЯН

Кандидат филологических наук,
младший научный сотрудник Туманяноведческой группы
Института литературы НАН РА

ПОВЕРХ ДОБРА И ЗЛА. АВЕТИК ИСААКЯН НОСИТЕЛЬ ФИЛОСОФИИ НИЦШЕ

Резюме

В статье мы рассмотрели Av. Уникальное отношение Исаакяна к бесценному наследию и философским идеям известного немецкого философа Фридриха Ницше. Мы применили ряд методов оценки художественной литературы: аналитический, экспертный, сравнительный.

Цель статьи – представить Ав. Исаакян и Ф. Общность и различия философско-идеологических взглядов Ницше.

Наша задача – представить с этой точки зрения общие черты их уникальных философских воззрений, поскольку Ав. В начале творческой жизни Исаакян по праву стал носителем философии Ницше, поскольку его мятежный дух и философские взгляды были ближе сердцу армянского поэта. Неслучайно он со временем говорил слова благодарности немецкому философу, ведь будучи подростком, он был очарован и взволнован его учением. Идеология Ницше действительно обогатила духовный мир поэта, способствовала формированию его мировоззрения, благодаря которому он смог полностью познать себя и раскрыть себя. Ни для кого не секрет, что гневный дух Ницше придал новые силы страдавшему от боли родины Ишакяну, что побудило его разрабатывать и развивать собственное учение о философских идеях под влиянием учения Ницше и образа Сверхчеловека, который он создано, которое в полной мере несет на себе печать поэта и мыслителя Исакяна.

Ключевые слова: *А. Исаакян, Ф. Ницше, Супермен, идеология, многособорное восприятие, национальный эпос, мировоззрение.*

ANI GHAZARYAN
Candidate of Philological Sciences,
junior research fellow of the Tumanyan Studies Group of the Institute of Literature of the RA NAS

BEYOND GOOD AND EVIL. AVETIK ISAAKIAN, THE BEARER OF NIETZSCHE'S PHILOSOPHY

Abstract

In the article we considered Av. Isahakyan's unique attitude to the priceless heritage and philosophical ideas of the famous German philosopher Friedrich Nietzsche. We applied a number of methods for evaluating fiction: analytical, expert, comparative.

The purpose of the article is to present Av. Isahakyan and F. Nietzsche's common and different philosophical and ideological views.

Our task is to present from this point of view the common features of their unique philosophical views, since Av. At the beginning of his creative life, Isahakyan rightfully became the bearer of Nietzsche's philosophy, since his rebellious spirit and philosophical views were closer to the heart of the Armenian poet. It is no coincidence that over time he expressed words of gratitude to the German philosopher, because as a teenager, he was fascinated and excited by his teachings. Nietzsche's ideology truly enriched the poet's spiritual world, contributed to the formation of his worldview, thanks to which he was able to fully know himself and reveal himself. It is no secret that Nietzsche's angry spirit gave new strength to Ishakyan, who was suffering from the pain of his homeland, which prompted him to develop and advance his own teaching on philosophical ideas under the influence of Nietzsche's teaching and the image of the Superman that he created, which fully bears the stamp of the poet and thinker Isakyan.

Keywords*: A. Isahakyan, F. Nietzsche, Superman, ideology, multi-council perception, national epic, self-discovery.*